

Ճիշտ պատասխանի ընտրության ձևաչափ

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է կարգավորում «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը

- 1) օրենքը կարգավորում է զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, լրագրողի հավատարմագրման, տարածված տեղեկատվության հերքման և պատասխանի իրավունքի իրացման հիմնադրույթներն ու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լրատվական գործունեություն իրականացնողները պատասխանատվության ենթակա չեն.
- 2) «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է միայն զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները.
- 3) «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը սահմանում է միայն լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները և լրագրողի հավատարմագրման կարգը.
(1, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 1)

Հարց

Ինչպե՞ս է իրականացվում լրատվական միջոցների թողարկումն ու տարածումը

- 1) լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման.
 - 2) լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են նախապես պետական գրանցում ստանալուց հետո.
 - 3) լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են նախապես լիցենզավորում ստանալուց հետո.
 - 4) լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են պետական մարմնում հայտարարագրվելուց հետո
- (1, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 2)

Հարց

Ինչե՞ր են սահմանվում պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում

- 1) լրատվության միջոցին ներկայացվող այն պահանջները (լրատվության միջոցի տեսակը, տարածման տարածքը, մամուլի տպաքանակը և այլն), որոնց պարագայում հավատարմագրվում է նրա լրագրողը, հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում՝ նրա աշխատանքի արդյունավետության ապահովմանն ուղղված պայմանները և տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները.
 - 2) պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում սահմանվում են միայն հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները.
 - 3) պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում սահմանվում են միայն տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները.
 - 4) պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգ չի սահմանվում.
- (1, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 2)

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ու՞մ վրա է տարածվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը

- 1) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա.
- 2) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է միայն պետական մարմինների և պաշտոնատար անձանց վրա.
- 3) Բոլոր կազմակերպությունների ու անձանց վրա.
- 4) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է միայն բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների և պաշտոնատար անձանց վրա.

(1, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 1, մաս 2)

Հարց

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

- 1) տեղեկություններ ստանալու մատչելիությունը.
- 2) տեղեկությունների ստանալու թափանցիկությունը
- 3) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.

(3, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց

Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) պարունակում է գաղտնի տվյալներ.
- 3) կխանգարի կազմակերպության գործունեությանը.

(1, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1)

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք

Հարց

Ո՞րն է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան

- 1) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հրապարակային ծանուցման՝ ինտերնետով իրականացման կարգն ու պայմանները.
- 2) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ինտերնետով աշխատելու կարգը և պայմանները.
- 3) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ինտերնետում պաշտոնական փաստաթղթերի տեղադրման կարգն ու պայմանները.

(1, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք, հոդված 1)

Հարց

Ո՞վ է սահմանում հայտարարությունների տեղադրման կարգը

- 1) Կայքում հայտարարությունների տեղադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչապետը

- 2) Կայքում հայտարարությունների տեղադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
 - 3) Կայքում հայտարարությունների տեղադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը.
 - 4) Կայքում հայտարարությունների տեղադրման կարգը սահմանում է մարմնի ղեկավարը
- (2, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 3)

Հարց

Եթե նախատեսվում է անհատական ծանուցում, ապա ե՞րբ է անձը համարվում պատշաճ ծանուցված

- 1) Եթե օրենսդրությամբ նախատեսվում է անհատական ծանուցում, ապա անձը համարվում է պատշաճ ծանուցված, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով.
 - 2) օրենքով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է անհատական ծանուցում, անձը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն կարգադրու մասին էլեկտրոնային հավաստում.
 - 3) Եթե օրենսդրությամբ նախատեսվում է անհատական ծանուցում, ապա անձը համարվում է պատշաճ ծանուցված, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա փոստի հասցեով.
- (2, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1)

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ

Հարց

Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը

- 1) Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար.
 - 2) Միայն Ազգային ժողովի ընդունած օրենքները.
 - 3) Միայն կառավարության ընդունած որոշումները.
 - 4) Միայն վարչապետի ընդունած որոշումները:
- (1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է անհատական իրավական ակտը

- 1) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
 - 2) Գրավոր փաստաթուղթ, որը վերաբերվում է միայն դրանում անհատապես նշված անձանց համար.
 - 3) նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.
 - 4) Միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
- (3, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է ներքին իրավական ակտը

- 1) նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից
- 2) միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
- 3) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
- 4) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են.

(1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)